# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՎԱԿՏՄ-ԳՀԾՁԲ-26/9-1

ք. Երևան «____» ապրիլի 2026թ.

Վարչապետի աշխատակազմ, ի դեմս վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գարիկ Բոշյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կոմպասս Բիզնես Գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ղ. Հարությունյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Կրթության տեսչական մարմնի** կարիքների համար **ուսումնական ծրագրերի հետ կապված ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող

փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **11 700 000** ( տասնմեկ միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 **Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պայմանագրով սահմանված Պատվիրատուի իրավունքները և պարտավորությունները փոխանցվում են Կրթության տեսչական մարմնին՝ բացառությամբ ֆինանսական գործառույթների՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 18-րդ հոդվածների պահանջները:**

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ | Կ Ա Տ Ա Ր Ո Ղ |
|---|---|
| Վարչապետի աշխատակազմ<br>ք. Երևան, Հանրապետության հրապարակ<br>Կառավարական տուն 1<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011024081<br>ՀՎՀՀ 02505554 | <<ԿՈՄՊԱՍՍ ԲԻԶՆԵՍ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ<br>Շիրակ, ք. Գյումրի, Վ. Սարգսյան 1, բն. 25<br><<ԱՄԵՐԻԱԲԱՆԿ>> ՓԲԸ<br>Հ/Հ 1570093598920200<br>ՀՎՀՀ 05558484 |
| ---------------------------------------------<br>(ստորագրություն) | ---------------------------------------------<br>(ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Digitally signed by BOSHYAN GARIK 1404880475
Date: 2026.04.23 16:32:38 AMT

*Հավելված N 1*
*«        »  ապրիլի  2026թ. կնքված*
**ՎԱԿՏՄ-ԳՀԾՁԲ-26/9-1** *ծածկագրով պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| **1** | 80521100/1 | Տեսչավորմանն ուղղված ծառայություններ՝ համաձայն ՀՀ կրթության տեսչական մարմնի 2026 թվականի ստուգումների տարեկան ծրագրի իրականացվելու են դասալսումներ (ընդհանուր 1300 դասաժամ)՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում (դպրոցներում)՝ «Հայոց լեզու» («Մայրենի», «Գրականություն», «Հայ գրականություն»), «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն»), «Ֆիզիկա», «Բնագիտություն», «Պատմություն», «Օտար լեզու», «Ֆիզկուլտուրա» առարկաներից և պարապմունքների լսումներ (ընդհանուր 36 պարապմունք)՝ նախադպրոցական ուսումնական հաստատություններում (մանկապարտեզներում)՝ «Խոսքի զարգացում», «Մաթեմատիկա», «Ինձ շրջապատող աշխարհը», «Երաժշտություն», «Ֆիզկուլտուրա» ծրագրային բաղադրիչներից: **Համաձայն տեխ բնութագրի. ըստ հավելված 1.1:** | ՀՀ դրամ | 11 700 000 | **1** | Պատվիրատուի կողմից նշված հասցեում (ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցներ)՝ ըստ 2026 թ. ստուգումների ծրագրի | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ ըստ 2026թ.-ի ստուգումների տարեկան ժամանակացույցի |

***վճարումը կիրականացվի փաստացի մատուցված ծառայությունների դիմաց՝ ստուգումներին մասնակցած աշխատակիցների թվաքանակին համապատասխան,*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024081
ՀՎՀՀ 02505554

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

<<ԿՈՄՊԱՍ ԲԻԶՆԵՍ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ
Շիրակ, ք. Գյումրի, Վ. Սարգսյան 1, բն. 25
<<ԱՄԵՐԻԱԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 1570093598920200
ՀՎՀՀ 05558484

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 1.1*
*«        » ապրիլի 2026թ. կնքված*
**ՎԱԿՏՄ-ԳՀԾՁԲ-26/9** *ծածկագրով պայմանագրի*

# ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

## Տեսչավորման ընթացքում հանրակրթական ուսումնական հաստատությունների (ՀՈՒՀ) 6-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ դասարաններում «Հայոց լեզու» («Մայրենի», «Գրականություն», «Հայ գրականություն»), «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն»), «Ֆիզիկա», «Բնագիտություն», «Օտար լեզու-2», «Ֆիզկուլտուրա» առարկաների դասալսումների և նախադպրոցական ուսումնական հաստատությունների (ՆՈՒՀ) միջին և ավագ խմբերում «Խոսքի զարգացում», «Մաթեմատիկա», «Ինձ շրջապատող աշխարհը», «Երաժշտություն», «Ֆիզկուլտուրա» ծրագրային բաղադրիչների պարապմունքների լսումների իրականացման ծրագիր (այսուհետ՝ Ծրագիր)

### 1. Ծրագրի հակիրճ նկարագիրը

**1.1.** Սահմանված կարգով ներգրավված մասնագետների կողմից կատարվող դասալսումների կամ պարապմունքների լսումների ընդհանուր թիվն՝ ըստ առարկաների (ՀՈՒՀ) և ծրագրային բաղադրիչների (ՆՈՒՀ)՝

$$\mathbf{20}_{\text{ՀՈՒՀ}} \times \mathbf{13}_{\text{ուսուցիչ}} \times \mathbf{5}_{\text{դասաժամ}} = \mathbf{1300}\ \text{դասաժամ.}$$

$$\mathbf{2}_{\text{ՆՈՒՀ}} \times ((\mathbf{2}_{\text{դաստ/3բաղ.}} \times \mathbf{5}_{\text{պարապմունք}}) + (\mathbf{4}_{\text{դաստ/1բաղ.}} \times \mathbf{2}_{\text{պարապմունք}})) = \mathbf{36}_{\text{պարապմունք}}:$$

Դասալսումներն իրականացվում են շաբաթական 5 աշխատանքային օր՝ հիմնական դպրոցների 6-րդ, 9-րդ, միջնակարգ դպրոցների 6-րդ, 10-րդ, ավագ դպրոցների 11-րդ դասարաններում և նախադպրոցական ուսումնական հաստատությունների (մանկապարտեզների) միջին և ավագ խմբերում:

**Հանրակրթական ուսումնական հաստատության** ուսուցիչը եթե դասավանդում է ընդամենը մեկ դասարանում, ապա նրա մոտ իրականացվում է առնվազն 5 դասալսում, իսկ 5-ից պակաս դասաժամերի դեպքում՝ ուսումնական պլանով սահմանված դասաժամերի թվով:

Ուսուցչի դասավանդած՝ **միևնույն տարիքային խմբի** 2 կամ ավելի դասարաններից (օրինակ՝ $6^{ա}$, $6^{բ}$, $6^{դ}$) յուրաքանչյուրում իրականացվում է 2-ական դասալսում, բայց ոչ պակաս, քան 5 դասալսումը: Օրինակ՝ Եթե ուսուցիչը դասավանդում է **միևնույն տարիքային խմբի** 2 դասարանում (օրինակ՝ $6^{ա}$-ում և $6^{բ}$-ում), ապա պետք է դասալսի առնվազն 5 դասաժամ, իսկ միևնույն տարիքային խմբի 2-ից ավելի դասարաններում՝ յուրաքանչյուրում առնվազն 2-ական դասալսում:

Ուսուցչի դասավանդած՝ **տարբեր տարիքային խմբերի** 2 դասարաններում (օրինակ՝ $6^{ա}$ և $11^{բ}$) իրականացվում է առնվազն 3-ական դասալսում:

Ուսուցչի դասավանդած՝ **տարբեր տարիքային խմբերի** 3 կամ ավելի դասարաններում (օրինակ՝ $6^{գ}$, $6^{բ}$, $10^{դ}$) իրականացվում է առնվազն 2-ական դասալսում:

Եթե ուսուցիչը դասավանդում է ընդամենը մեկ կիսվող դասարանում, և նրա շաբաթական ժամերը չեն գերազանցում 2-ը, ապա այդ ուսուցչի մոտ դասալսումներ չեն իրականացվում:

Եթե ուսուցիչն ունի մինչև 1 տարվա ուսուցչական ստաժ կամ այդ դպրոցում դասավանդում է 1 տարուց պակաս, ապա այդ ուսուցչի մոտ դասալսում չի իրականացվում:

Մեկից ավելի կիսվող դասարաններում դասավանդող ուսուցի մոտ դասալսվում են բոլոր դասաժամերը, բայց ոչ ավելի, քան 6 դասաժամը:

«Ֆիզիկա», «Բնագիտություն», «Օտար լեզու-2» առարկաները դասավանդող ուսուցիչների մոտ դասալսվում են ուսումնական պլանով սահմանված բոլոր դասաժամերը՝ չգերազանցելով 6 դասաժամը:

**Նախադպրոցական ուսումնական հաստատությունում** մասնագետը լսում է տվյալ դաստիարակի շաբաթական բոլոր պարապմունքները:

Յուրաքանչյուր դասաժամի (պարապմունքի) ծառայության համար հատկացվում է 14000 ՀՀ դրամ:

**1.2. Ծրագրի շրջանակներում հանրակրթական ուսումնական հաստատությունում «Հայոց լեզու» («Մայրենի», «Գրականություն», «Հայ գրականություն»), «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն), «Ֆիզիկա», «Բնագիտություն», «Օտար լեզու-2», «Ֆիզկուլտուրա» առարկաները դասալսող կամ**

**նախադպրոցական ուսումնական հաստատությունում «Խոսքի զարգացում», «Մաթեմատիկա», «Ինձ շրջապատող աշխարհը», «Երաժշտություն», «Ֆիզկուլտուրա» ծրագրային բաղադրիչների պարապմունքները լսող մասնագետն իրականացնում է՝**

1.2.1. ուսումնական պարապմունքների լսումներ (դասալսումներ), դասավանդողի (դաստիարակի) և սովորողի (սանի) գործողությունների դիտարկում, գնահատում՝ ըստ ***դասալսման (պարապմունքի լսման) ձևաթղթի***[1].

1.2.2. դասավանդողի (դաստիարակի) մանկավարժական-մեթոդական կարողությունների, մասնագիտական գիտելիքների, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման զարգացմանն ուղղված մեթոդական աջակցության տրամադրում.

1.2.3. Տեսչական մարմնի կողմից տեսչավորման ընթացքում սովորողներին տրվող գրավոր աշխատանքների անցկացման և դրանց ստուգման ընթացքի նկատմամբ հսկողություն, դասավանդող ուսուցչի կողմից ստուգված գրավոր աշխատանքների վերստուգում.

1.2.4. դասալսումների հիման վրա դասալսվող բոլոր առարկաների (ծրագրային բաղադրիչների պարապմունքների) դասավանդման (*«Ֆիզիկա», «Բնագիտություն» առարկաների դեպքում՝ լաբորատոր և գործնական աշխատանքների իրականացման*) բնութագրի կազմում, մասնագիտական կարծիքի ներկայացում սովորողների (սաների) ուսումնառության, ուսուցիչների (դաստիարակների) դասավանդման և կրթության կազմակերպման որակի վերաբերյալ՝ ըստ ***եզրակացության ձևաթղթի***[2]:

1.2.5. Տվյալ դասարանում (նպատակային խմբում) նախորդ ուսումնական տարում չդասավանդած ուսուցչի գնահատման հաշվարկում չեն ներառվում տեսչավորման ընթացքում այդ դասարանում անցկացված գրավոր աշխատանքների արդյունքները և նախորդ տարվա տարեկան գնահատականների հաշվարկային միավորները:

**1.3.** Տեսչական մարմնի ծառայողներն ուսումնական հաստատությունում իրականացնում են գործընթացի նկատմամբ ընթացիկ հսկողություն, աջակցություն և կազմակերպչական գործառույթներ դասալսումների և գրավոր աշխատանքների անցկացման ընթացքում:

## 2. Դասալսում (պարապմունքի լսում) իրականացնող մասնագետներին ներկայացվող պարտադիր պահանջները

2.1. Տեսչավորման գործընթացքում ներգրավվող մասնագետներին ներկայացվող պահանջները և ներգրավման կարգը սահմանված են **Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 11-ի N 1783-Ն որոշմամբ**:

Տեսչական մարմնի կողմից իրականացվող տեսչավորման գործընթացում մասնագետներ կարող են ներգրավվել, եթե հանրակրթական և նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում կրթության որակի գնահատման կամ կրթության կազմակերպման առկա խնդիրները բացահայտելու և ուսումնական հաստատությանը խորհրդատվություն տրամադրելու համար անհրաժեշտ է համապատասխան տեսական կամ կիրառական գիտելիքներ ունեցող ֆիզիկական անձի օժանդակությունը:

2.2. Տեսչավորման իրականացմանը որպես մասնագետ կարող է ներգրավվել այն ֆիզիկական անձը, որն ունի՝

---

[1] Ձևաթղթերը տրամադրում է ՀՀ կրթության տեսչական մարմինը:

[2] Ձևաթուղթը տրամադրում է ՀՀ կրթության տեսչական մարմինը:

1) բարձրագույն կրթություն հոգեբանություն կամ նախադպրոցական, ընդհանուր մանկավարժություն մասնագիտությամբ կամ տվյալ (գնահատվող) առարկայի մասնագիտական ոլորտում.

2) վերջին տասը տարվա ընթացքում տվյալ առարկայի (ըստ դիպլոմում նշված որակավորման) ուսուցչական գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին տասը տարվա ընթացքում տվյալ առարկային վերաբերող գիտամանկավարժական գործունեության առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին տասը տարվա ընթացքում տվյալ առարկայի դասավանդման մեթոդաբանության մշակման կամ ուսուցիչների մասնագիտական կարողությունների բարձրացմանն ուղղված վերապատրաստման դասընթացների վարման փորձ.

3) մանկավարժական նորարարական մեթոդների իմացություն, վերլուծական հմտություններ, տեղեկատվությունն առանձնացնելու և ընդհանրացնելու ունակություն, իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ և եզրակացություններ կազմելու հմտություն:

2.3. Տեսչավորման գործընթացում մասնագետ ներգրավելիս կամավոր ատեստավորումից 80-100 տոկոս արդյունքը կամ 3-րդ կամ 4-րդ աստիճանի տարակարգ շնորհված լինելը համարվում է առավելություն:

2.4. Հաշվի առնելով տեսչավորման տարեկան ծրագրից բխող կարիքները՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայությունների ձեռք բերման պայմանագիր է կնքվում սույն բաժնի 2.2-2.3-րդ կետերով սահմանված պահանջները բավարարող մասնագետներ ունեցող կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ հետ:

2.5. Տեսչավորման գործընթացում մասնագետն առաջնահերթորեն պետք է ներգրավվի սույն բաժնի 2.4-րդ կետով սահմանված կազմակերպությունից կամ անհատ ձեռնարկատիրոջից:

2.6 Տեսչավորման իրականացմանը ներգրավված մասնագետները չպետք է հրապարակեն տեսչավորման ներգրավման արդյունքում իրենց հայտնի դարձած՝ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկությունները, իրավական ակտերով նախատեսված դեպքերում տրամադրման հատուկ ընթացակարգ ունեցող տեղեկությունները, ինչպես նաև տեսչավորման գործընթացում մասնակիցներին առնչվող անձնական տվյալները:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024081
ՀՎՀՀ 02505554

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

<<ԿՈՄՊԱՍՍ ԲԻԶՆԵՍ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ
Շիրակ, ք. Գյումրի, Վ. Սարգսյան 1, բն. 25
<<ԱՄԵՐԻԱԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 1570093598920200
ՀՎՀՀ 05558484

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 2*
*«          »   ապրիլի  2026թ. կնքված*
*ՎԱԿՏՄ-ԳՀԾՁԲ-26/9-1 ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **հրավերով նախատեսված չափաբաժնի համարը** | **գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)** | **անվանումը** | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| **1** | 80521100/1 | Ուսուցման ծրագրերի հետ կապված ծառայություններ | - | - | - | 4 680 000 | 4 680 000 | 4 680 000 | 6 435 000 | 6 435 000 | 6 435 000 | 11 700 00 | 11 700 00 | 11 700 00 | **11 700 00** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

## ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024081
ՀՎՀՀ 02505554

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

## ԿԱՏԱՐՈՂ

<<ԿՈՄՊԱՍ ԲԻԶՆԵՍ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ
Շիրակ, ք. Գյումրի, Վ. Սարգսյան 1, բն. 25
<<ԱՄԵՐԻԱԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 1570093598920200
ՀՎՀՀ 05558484

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված 3*
*«     » ապրիլի 2026թ. կնքված*
*ՎԱԿՏՄ-ԳՀԾՁԲ-26/9-1 ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________________ | ________________________________ |
| ______________________________ | ________________________________ |
| գտնվելու վայրը ______________ | գտնվելու վայրը _________________ |
| հհ ___________________________ | հհ______________________________ |
| հվհհ _________________________ | հվհհ____________________________ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«     » «          » 20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
__________________________________________________________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «     » «          » 20    թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ______________________________ | ______________________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________________ | ______________________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«      »    ապրիլի 2026թ. կնքված*
*ՎԱԿՏՄ-ԳՀԾՁԲ-26/9-1  ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը                    Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20     թ. _______________________ -ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը                    պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20  թ. ___________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

| **Հանձնեց** | **Ընդունեց**<br>հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
|---|---|
| ______________________________<br>ազգանուն, անուն | ______________________________<br>ազգանուն, անուն |
| ______________________________<br>ստորագրություն | ______________________________<br>ստորագրություն |

*Հավելված N 4*
*«          » ապրիլի 2026թ. կնքված*
*ՎԱԿՏՄ-ԳՀԾՁԲ-26/9-1 ծածկագրով պայմանագրի*

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

______________________________________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ____________________________-ի և ______________________-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

____________________-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «---------------------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.10 կետով սահմանված պահանջներին:

______________________________________________________ _______________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 2026թ.

Digitally signed by BOSHYAN GARIK 1404880475
Date: 2026.04.23 16:31:36 AMT

Digitally signed by HARUTYUNYAN GHARIB 1609840240

Date: 2026.04.23 16:10 AMT